

2 pup hand

2/2 pup - sample

891.715

2-73


7-73

ԲՈՐԻՍ ԺԻՏԿՈՎ

3
-6 NOV 2011

-6 NOV 201

ՓՂԵՐԻ ՄԱՍԻՆ



ՊԵՏԼՐՈՑ
ՅԵՐԵՎԱՆ
1 9 3 5

891.31 5
2-73

15K

ԲՈՐԻՍ ԺԵՏԿՈՎ

Փ Ղ Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

Նկարները Ն. ՏՐՍԻԻ

Ռուսերենից թարգմ.
ՅԵՐ. ԹԱՂԻԱՆՈՍՅԱՆ

Handwritten signature



1935
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՂԱՆ




ՓՈՔՐԱՀԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱԹՈՐ

Գլավիտ 60

Հրատար. № 3213

Տիրաժ 5000




36768-62

Պատ. խմբագիր Ա. Հայրյան
 Լեզվական խմբագիր Ա. Ասատույան
 Տեխնիկական խմբագիր Հ. Տեր-Դավթյան

Հանձ. և արտ. 26/II Ստորագրված է տպելու 14/III-35

Ստատիստիկա № 125x176 պատվեր № 1186

Типография им. Стачки 19/2 г. АЧКПТ Ростов на-Дону.



Մեր շոգենավը մոտենում էր Հրնդ-
 կաստանին: Առավոտյան արդեն պիտի
 տեղ հասնեյինք: Հեղձապանհուժյունս
 վերջացրել դե շատ հազարավոր եյի, բայց
 բունս չեր մայնում: Շարունակ փտա-
 ծում էյի այն մնաին, թե՛ ինչքան նոր-
 նոր բաներ պիտի տեսնեմ վաղը: Յես
 նմանում էյի այն յերեխային, վորին
 մի արկղ լիքը խաղալիքներ են ընծա-
 յում և պատվիրում, վոր միայն մյուս
 օրն արկղը բաց անի: Մտածում էյի,

վոր վաղն առավոտյան աչքս բաց անեմ
 թե չե, ինձ շրջապատված կտեսնեմ
 սևադեմ հնդիկներով, վորոնք կշարժ-
 վեն չորս կողմս ու կխոսեն ինձ հա-
 մար անհասկանալի լեզվով, և դրանք
 իսկական մարդիկ կլինեն և վոչ այն
 պատկերները, վոր յես շատ անգամ
 տեսել եմ: Կտեսնեմ ծառից կախ ըն-
 կած բանաններ, նոր կյանք, նոր-նոր
 բաղաբներ, շարժում, փողոցների յե-
 ուղգեռ և վերջապես փղեր, փղեր...
 Ամենից շատ ինձ հետաքրքրում էին
 փղերը: Խոստովանում եմ, վոր հավա-
 տալս չեի գալիս, թե այդտեղի փղերը,
 այդ ահագին կենդանիները նման չեն
 այն փղերին, վորոնց մենք տեսնում
 ենք կենդանաբանական այգիներում,
 այլ ազատ-համարձակ իրենց համար
 անցնում են փողոցներով ու բեռներ
 կրում...

Անհամբերությունից բռնս չեի տա-
 նում: Պիտի իմանալ, վոր այլ բան է,

յերբ ցամաքային ճանապարհորդու-
 թյուն ես կատարում և ամեն բան աչ-
 քիդ առաջ փոփոխվում է աստիճանա-
 բար, և այլ բան, յերբ յերկու շա-
 բաթ անց ես կայնում ովկիանոսի
 վրա, ջրից բացի ուրիշ բան չես տես-
 նում և մեկ ել հանկարծ աչքիդ առաջ
 բացվում է մի նոր ու անծանոթ
 յերկիր: Այդ ժամանակ մարդ իրեն
 այնպես է զգում, ինչպես թատրո-
 նում, յերբ բարձրացնում են վարա-
 գույրը:

Առավոտյան լսեցի վոտնաձայներ
 տախտակամածի վրա և մեքենայի սու-
 լոցը: Շտապով մոտեցա իլյումինա-
 տորին՝ պատուհանին և տեսա, վոր
 արդեն հասել ենք և կանգնած ենք նա-
 վահանգստում: Մեր առաջը գտնվում
 էր մի մեծ ու սպիտակ բաղաբ: Մեր
 չորս կողմը կանգնած էին բազմաթիվ
 նավեր, նրանց մոտ շատ նավակներ,
 վորոնց մեջ նստած էին թխադեմ

մարդիկ, սպիտակ ատամներով, գրլին-
ներին չալմա փաթաթած: Նրանք բո-
լորը խոսում, աղմկում էին: Արեգակն
այնքան պայծառ էր, վոր մարդ նեղ-
վում էր նրա լույսից և չէր իմանում
վորտեղ պատսպարվի: Խելքս կորց-
րածի պես նայում էյի չորս կողմս և
ինձ այնպես էր թվում, թե տեսածս
իրականություն չի, այլ յերազ է, վոր
յես գտնվում եմ մի հեքիաթական
աշխարհում: Ախորժակ չունեյի բան
ուտելու, իմ մեջ միայն մի ցանկու-
թյուն կար, վորքան կարելի յե շուտ
ափ դուրս գալ և մտնել այդ հեքիա-
թային աշխարհը. այդ պատճառով
ասացի՝ սիրելի ընկերներ, հետո յես
ձեր փոխարեն մեկի դիմաց յերկու
անգամ հերթապահություն կանեմ,
միայն թե ինձ այժմ ազատ թողեք,
վոր շուտով ափը գնամ:

Յերկու հոգով ափ դուրս յեկանք:
Նավահանգստում և բաղաբում անա-

սելի յեռուզեռ էր տիրում, փողոց-
ները լիքն էյին խուռն բազմությամբ,
ամեն տեղ աղմուկ էր ու շարժում,
խկ մենք խելքներս կորցրածի պես
չէյինք իմանում՝ վոր կողմը նայենք
և ուր գնանք: Մեզ այնպես էր թվում,
թե վոչ թե մենք ենք գնում, այլ մեզ
մի բան քշում, տանում է: Առհասա-
րակ պետք է ասել, վոր ծովով ճա-
նապարհորդելուց հետո մարդ իրեն
վորոշ ժամանակ տարորինակ է զգում
ցամաքի վրա: Տեսանք առջևից տրամ-
վայ է անցնում: Նստեցինք տրամ-
վայ, առանց իմանալու թե ուր պիտի
գնանք, միայն թե գնանք մի հեռու
տեղ: Տրամվայն արագ առաջ էր սլա-
նում, իսկ մենք նայում էյինք մեր
չորս կողմը: Մեկ էլ տեսանք, վոր
բաղաբից դուրս ենք յեկել: Տրամ-
վայը կանգնեց, մենք իջանք և մեր
առաջ տեսանք մի ճանապարհ: Ըն-
կանք այդ ճանապարհն ու գնացինք:

Մտածում եյինք — յերևի մի տեղ
դուրս կգանք:

Արեգակը գտնվում էր ուղիղ մեր
գլխավերևը, դրա համար ել մեր ըստ-
վերները չեյին ձգվում մեր յետևից
կամ կողքից, այլ ամբողջապես ընկ-
նում եյին մեր վոտների տակ. գնա-
լիս մենք վոտներով տրորում եյինք
մեր սեփական սովերները:

Բավական գնացինք, բայց վնչ մի
մարդու չհանդիպեցինք: Մեկ ել տե-
սանք դիմացից գալիս ե մի ահագին
փիղ. իսկ նրա յերկու կողմից վազ-
վում են չորս յերեխա, վորոնցից
ամենամեծը հագիվ տասը տարեկան
լիներ: Յես աչքերիս չեյի հավատում:
Քաղաքում մենք վնչ մի փիղ չտե-
սանք, իսկ այստեղ հանդիստ և առանց
շտապելու փիղը գնում էր իր ճանա-
պարհը. կարելի չէր կարծել, թե կեն-
դանաբանական այգուց փախած մի
փիղ ե: Փիղը մեզ վոր տեսավ, կանգ

առավ: Մեր սիրտն ահ ընկավ: Փղի
մոտ հասակով մարդ չկար, միայն յե-
րեխաներ եյին: Ով գիտե՝ նա ինչ եր
մտածում: Յեթե նա իր կնճիթով մի
թեթե խփի մեզ, մեր բանը բուրդ
կլինի: Իսկ փիղը, ինչպես յերևում էր,
հենց մեր մասին եր մտածում՝ թե
այս ոտարձկաններն ինչ մարդիկ են:
Գուցե հենց այդ պատճառով ել նա
կանգ առավ:

Փիղը կարթի պես ծռեց իր կնճիթը,
յերեխաներից ամենամեծը կանգնեց
այդ կարթի վրա, ինչպես պատվան-
դանի վրա, և բռնեց նրա կնճիթից,
իսկ փիղը զգուշությամբ բարձրացրեց
նրան ու դրեց իր գլխի վրա: Յերե-
խան տեղավորվեց նրա յերկու ականջ-
ների արանքում: Նույն յեղանակով
փիղը յերկու յերեխաներին ևս միան-
գամից բարձրացրեց ու դրեց գլխի
վրա, մնաց չորրորդ յերեխան, վոր
հագիվ չորս տարեկան լիներ և հա-

գին բացի մի կարճ շապկից ուրիշ շոր
չկար: Փիղը մեկնում էր իր կնճիթը
դեպի նա, կարծես ուզում էր ասել,
թե արի, դու ել նստի, վոր բարձրաց-
նեմ, մեջքիս դնեմ, բայց յերեսան
այս ու այն կողմն էր թռչկոտում և
ծիծաղելով հեռու փախչում: Յերե-
խաներից ամենամեծը վերևից նրան
կանչում էր, իսկ փոքրը ներքևից նրա
տնազն էր անում ու փախչում: Փիղը
նրան յերկար չսպասեց, բաշ բցեց
կնճիթն ու առաջ գնաց, ցույց տա-
լով, վոր վոչ մի ցանկություն չունի
նրա գոլթյուններին նայելու: Նա
գնում էր աջ ու ձախ ճոճելով իր
կնճիթը, իսկ յերեսան վազվզում էր
նրա վոտների մոտ ու զանազան չա-
րություններ անում Մեկ ել հանկարծ,
յերբ յերեսայի ուշքը վրան չեր, փիղը
զարմանալի ճարպիկությամբ կնճիթով
պինդ բռնեց նրա շապկից ու վեր բարձ-
րացրեց: Յերեսան ձեռքերով ու վոտ-



բերով բղովի պես շարժումներ էր
անում, վոր մի կերպ դուրս պրծնի
փղի կնճիթից, բայց արդեն ուշ էր:

Փիղը բարձրացրեց նրան և զգուշությամբ դրեց իր մեջքին, վորտեղ մյուս յերեխաները բռնեցին նրան ու նստեցրին իրենց կողքին: Յերեխան փղի գլխին ել յերկար ժամանակ չեր հանգըստանում ու զանազան չարություններ եր անում:

Մենք գնում եյինք ճանապարհի մի կողմից, փիղը՝ մյուս կողմից և նա շարունակ ուշադրությամբ ու զգուշությամբ նայում եր դեպի մեզ: Յերեխաներն ել աչքերը չռած նայում եյին մեզ և իրար հետ փսփսում: Նրանք փղի մեջքին այնպես հանգիստ եյին, վոր կարծես իրենց տան կտուրի վրա լինեյին:

Ինքս ինձ մտածում եյի, — իսկպես վոր զարմանալու բան ե, այդ փոքրիկ յերեխաներն այնտեղ վնչ մի բանից չեն վախենում: Յեթե մինչև անգամ վագրի ել հանդիպեն, փիղն իր ահագին կնճիթով պինդ կբռնինրա

փորի տակից ու բավականին վեր կշարտի, իսկ վայր ընկնելիս իր ժանիքների վրա կառնի նրան կամ կգցի վտանների տակ ու այնպես կտրորի, վոր վագրին մի տափակ բան կդարձնի: Իսկ քիչ առաջ նա ինչպիսիք քնքշությամբ բռնեց յերեխային և զգուշությամբ բարձրացրեց ու դրեց իր մեջքի վրա:


Փիղն անցավ մեր մոտով, դուրս յեկավ ճանապարհից ու մտավ մացառուտի մեջ: Մացառուները փշոտ եյին և այնպես խիտ բուսած, վոր անկարելի յերնրանց միջով անցնել: Բայց փիղը նրանց միջով անցնում եր այնպես, ինչպես մենք կանցնեյինք սովորական թփերի միջով, լսվում եր միայն ջարդվող մացառուների ճրթճրթոցը: Նա անցավ մացառուտով ու մոտեցավ անտառին: Այնտեղ նա կանգ առավ մի ծառի մոտ, կնճիթով բռնեց ճյուղերից մեկը և կռա-

ցրեց զեպի յերեխաները: Նրանք կանգ-
 նեցին, բռնեցին ճյուղից ու սկսեցին
 մի բան քաղել: Ամենափոքր յերեխան
 ել տեղից վեր կացավ և աշխատում
 եր ինքն ել մի բան քաղել ու այն-
 պիսի շարժումներ եր անում, վոր
 կարծես փղի վրա չլիներ կանգնած,
 այլ գետնի վրա: Փիղը բաց թողեց
 այդ ճյուղը և մի ուրիշը կռացրեց:
 Այդ ժամանակ փոքրիկ յերեխան հեշտ
 ու հանգիստ բարձրացավ այդ ճյուղի
 վրա, վոր ինքն ել իր բաժին պտուղն
 ուզածին չափ քաղի: Յերբ վերջացրին
 քաղելը, փիղը բաց թողեց ճյուղը և
 ճյուղի հետ յերեխան ել վերև թռավ
 ու կորավ ծառի սաղարթի մեջ: Մտա-
 ծեցինք, չլինի՞ թե յերեխան ընկավ
 անտառի մեջ: Մենք վազեցինք այն
 կողմը յերեխային վորոնելու, բայց
 ստիպված յեղանք կանգ առնել, փշոտ
 մացառուտով անցնելու վոչ մի հնար
 չկար. այնքան խիտ էյին նրանք ու

միմյանց խճճված: Նայեցինք ու տե-
 սանք, վոր փիղը կնճիթով ծառի ճյու-
 ղերի մեջ մի բան է վորոնում: Նա
 գտավ ու բռնեց փոքրիկին, վորը կապկի
 պես կախ եր ընկել ծառի ճյուղից.
 փիղը նրան նստեցրեց իր տեղը: Հետո
 նա դուրս յեկավ ճանապարհը ու գնաց
 մեր առջևից, իսկ մենք գնում էյինք
 նրա յետևից: Նա գնում եր ու մեկ-մեկ
 կասկածով յետ նայում, կարծես իմա-
 նալու համար, թե այս ի՞նչ մարդիկ
 են, վոր շարունակ հետևում են իրեն:

Այդպես գնալով փղի յետևից, մենք
 կանգ առանք մի տան առաջ, վոր չորս
 կողմից պատած եր ցանկապատով:
 Փիղը կնճիթով բաց արեց դռնակը և
 զգուշությամբ ներս մտավ բակը, վոր-
 տեղ յերեխաներին ցած դրեց գետին:
 Բակում, չգիտենք ինչո՞ւ, տանտիրու-
 հին բարկացավ փղի վրա: Նա մեզ չեր
 նկատում, մենք ցանկապատի մյուս
 կողմից դիտում էյինք:

Տանտիրուհին յերկար բարկանում
 ու գորգուռում եր փղի վրա: Փիղը
 դժկամակությամբ դարձավ ու գնաց
 դեպի ջրհորը: Ջրհորի յերկու կողմը
 տնկած եր յերկու սյուն, իսկ նրանց
 մեջ ամրացած եր մի չարխ՝ վրան
 պարան փաթաթած և կողքից մի կոթ
 շինած: Մեկ ել տեսանք փիղը կնճի-
 թով բռնեց չարխի կոթն ու պտտեց-
 րեց և պարանի ծայրից կապած ջրա-
 մանն իջեցրեց ջրհորը, հետո հակա-
 ոակ կողմը պտտեցնելով, ջրով լիքը
 ջրամանը բարձրացրեց վերև: Նա մոտ
 տասը դույլ ջուր հանեց ջրհորից: Ամեն
 անգամ, յերբ ջրով լիքը ջրամանը
 բարձրանում ու համնում եր ջրհորի
 բերանին, փիղը կնճիթի վերին մասը
 դեմ եր անում չարխի կոթին, փոր
 չարխը կանգնի, իսկ կնճիթի վարի
 մասը ծռում եր, վերցնում ջրամանը
 և դնում ջրհորի կողքին: Հնդիկ կինը
 ջուրը լցնում եր ուրիշ ամանի մեջ



ու տանում: Նա այդ որը լվացը եր
 անում և յերեխաներին ել ստիպում
 եր, փոր ջուր կրեն և իրենց տանում:



Չարխը մի կողմի վրա պտտեցնելով
փիղը դատարկ ջրամանը նորից իջեց-
նում եր ջրհորը և, մյուս կողմի վրա
պտտեցնելով՝ լիքը ջրամանը հանում
ջրհորից։

Տանտիկինը դարձյալ սկսեց բար-
կանալ փղի վրա։ Փիղը թողեց, վոր
դատարկ ջրամանն ընկնի ջրհորը, թափ
տվեց ականջներն ու հեռացավ, ել
չցանկանալով ջուր հանել։ Նա գնաց
ու կանգնեց մի խարխուլ սրահի տակ,
վորտեղ նա հազիվ եր տեղավորվում։
Սրահի անհաստատ սյուները հազիվ
եյին պահում նրա կտուրը, վոր ծածկ-
ված եր յեղեգնով ու մի տեսակ
յերկար տերևներով։

Հենց այդ միջոցին մեզ նկատեց
տանտերը։ Մենք նրան ասացինք, վոր
ոտարականներ ենք, յեկել ենք փղին
նայելու։ Տանտերը մի քիչ գիտեր անգ-
լերեն։ Հարցրեց՝ ինչ մարդիկ ենք
մենք և աչքը չեր հեռացնում մեր

առևտական գլխարկներից։ Պատասխա-
նեցի, վոր առևտներ ենք։

Նա հասկացողություն չուներ
առևտների մասին։

— Դուք անգլիացի չե՞ք ուրեմն։

— Ձե, — ասացինք, — անգլիացի
չենք։ Տանտիրոջ տրամադրությունը
փոխվեց, նա ծիծաղեց ու կանչեց մեզ
իր մոտ։

Հնդիկներն ատելությամբ են վե-
րաբերվում դեպի անգլիացիները։ Վա-
ղուց ե արդեն, ինչ անգլիացիք տիրել
են նրանց յերկիրը, այնտեղ դարձել
տեր ու տիրական և սաստիկ ճնշում
են հնդիկներին։

Հարցնում եմ.

— Ինչո՞ւ փիղը դուրս չի գալիս
սրահից։

— Նրա համար, — պատասխանեց
հնդիկը, — վոր նեղացել ե, և իզուր տեղը
չի նեղացել։ Այժմ ինչ ել անես, նա չի
աշխատի, մինչև բարկությունը չանցնի։

Մեկ ել տեսանք փիղը սրահի տակից դուրս յեկավ և դուրս գնաց բակից: Կարծում եյինք, թե ել չի վերադառնա: Յերբ տանտերն իմացավ մեր կարծիքը՝ ծիծաղեց: Փիղը մոտեցավ մի մեծ ծառի, կողքը դեմ տվեց ծառի բնին ու սկսեց քսվել նրան: Ահագին ծառը այնպես եր շարժվում, վոր քիչ եր մնում արմատահան լիներ: Նա այդ ձևով բորում եր իր մարմինը, ինչպես խոզերն են անում, քսվելով ցանկապատին:

Յերբ բորելը վերջացրեց, կնճիթով բավական փոշի վերցրեց ու մի բանի անգամ փչեց բորած տեղերի վրա: Այդ յեղանակով նա իրեն մաքրում եր կծող միջատներից: Փղի կաշին պինդ ե, ինչպես կոշիկի տակի կաշին, իսկ կաշվի ծալքերը բարակ են: Տաք յերկրներում շատ կան սաստիկ կծող միջատներ:

Փիղը զարմանալի խելոք կենդանի

յե: Նա սրահի սյուներին չքովեց իրեն բորելու համար, լավ հասկանալով, վոր դրանից սրահը քարուքանդ կլինի: Նույն իսկ սրահի տակն եր մտնում ու դուրս գալիս մեծ զգուշությամբ, իսկ իրեն բորելու համար նա ոգտվում եր ծառից: Ասում եմ հնդիկին.

— Ինչ խելոք կենդանի յե այդ փիղը:

Նա ծիծաղելով պատասխանում ե.

— Զարմանալու փոշինչ չկա, յեթե յես ել հարյուր հիսուն տարի ապրած լինեյի, հիմա շատ բան սովորած կլինեյի: Այդ փիղը պահպանել ու խնամել ե իմ պապին:

Յես աչքս դարձրի դեպի փիղը և ինքս ինձ մտածեցի, վոր այս տան մեծն ու գլխավորը փոշ թե հնդիկն ե, այլ իսկապես այդ փղն ե:


— Շատ ծեր ե, բանի՞ տարեկան կլինի — հարցրի յես:

— Չե, — պատասխանեց հնդիկը —

այնքան ել ծեր չի, հարյուր հիսուն տարեկան է, նրա հասակի ամենալավ ժամանակն է: Մի փղի ճուտ ել ունենք, վոր քսան տարեկան է, սրա տղան է, դեռ բոլորովին յերեխա յէ: Քառասուն տարին լրանալուց հետո նա իսկական փիղ կդառնա: Քիչ սպասեք՝ հիմա նա կգա իր մոր հետ, և դուք կտեսնեք մեր փղիկին, նա շատ փոքր է դեռ:

Յեւ իսկապես, շատ չանցած, յեկավ մայր փիղն իր ճուտի հետ, վոր մի մեծ ձիու չափ կլիներ: Նա բուռակի պես գնում եր մոտ յետևից:

Հնդիկի յերեխաներն այլևս չէյին ոգնում մորը: Նրանք բոլորը թրուշկոտալեն դուրս յեկան բակից ուրիշ տեղ գնալու: Յերեխաների յետևից դուրս յեկան և փղերը՝ մայրը, հայրը և փոքրիկ փղիկը: Հնդիկը մեզ բացատրեց, վոր նրանք գնում են գետը: Մենք ել գնացինք նրանց հետ:



Յերեխաները մեզանից ամենևին չէյին բաշվում: Մենք շարունակ խոսում էյինք միմյանց հետ, նրանք

իրենց լեզվով, մենք՝ ոռւսերեն, ամբողջ ճանապարհին բարձրաձայն ծիծաղում եյինք։ Ամենից շատ մեզ անհանգստացնում էր ամենափոքրիկը, վորն իմ գլխարկը դնում էր գլխին և բարձր ձայնով աղաղակում ինչ վոր ծիծաղելի բան՝ յերևի մեր հասցեյին։

Գնում եյինք շարունակ անտառի միջով։ Ողն անտառում բարկ էր, բուրումնալից ու թանձր։

Հասանք վերջապես գետին, բայց տեսածներս գետ չէր, այլ մի կատարյալ հեղեղ, վոր հոսում էր չափազանց սրնթաց, բերելով իր ավերը։ Գետի ավր մի մետրաչափ բարձր էր ջրից։ Փղերը մտան ջուրը։ Փղիկին կանգնացրեցին այնպիսի մի տեղ, վորտեղ ջուրը հասնում էր մինչև նրա կուրծքը։ Հայրն ու մայրը սկսեցին լողացնել իրենց ճուտին։ Նրանք կնճիթները լցնում եյին ջրով ու ավազով և թափում փղիկի վրա։

Այդ ժամանակ փղիկը համարյա կորչում էր ջրի կաթիլների մեջ։

Յերեխաները վախենում եյին մըտնել գետը, վորը շատ սրնթաց էր և կարող էր նրանց քշել։ Նրանք թռչկոտալեն խաղում եյին ավին և շարունակ բարկոծում փղերին։ Փղերը վոչ մի ուշադրություն չեյին դարձնում և շարունակում եյին իրենց գործը՝ լողացնում եյին իրենց փոքրիկին։ Մեկ ել հանկարծ նրանցից մեկը ջրով լիքը կնճիթը դարձրեց դեպի յերեխաները և ջրի մի ուժեղ շիթ թողեց նրանցից մեկի փորի վրա։ Յերեխան շժմելուց տեղում նստեց, և բոլորը կշկշալով սկսեցին ծիծաղել։

Փիղը շարունակում էր իր ճուտիկին լողացնելը, իսկ յերեխաները դարձյալ հանգիստ չեյին տալիս նրանց և շարունակ բարկոծում եյին։ Բայց փիղը միայն ականջներն էր շարժում, կարծես ուզում էր ասել՝ դե բավա-



կան ե վերջապես չարություն աներ,
չէր տեսնում, վոր զբաղված եմ: Յեւ
հենց այն ժամանակ, յերբ յերեխա-

ները կարծում եյին, թե փիղը կըն-
ծիթի ջուրը պիտի ածի փղիկէ վրա,
նա կնճիթը դարձրեց դեպի նրանց
և նորից ջրի մի ուժեղ շիթ բաց թո-
ղեց նրանց վրա:

Յերեխաներին այդ ավելի ևս զը-
վարճացրեց: Ուրախությունից նրանք
սկսեցին վազվզել ու գլուխկոնձի տալ:

Փիղն ափ դուրս յեկավ, փղիկը
կնճիթը ձեռքի պես մեկնեց դեպի
վեր, փիղն իր կնճիթը փաթաթեց նրա
կնճիթին և ոգնեց նրան ափ դուրս
գալու: Դրանից հետո բոլորը միասին՝
յերեք փիղ և չորս յերեխա վերա-
դարձան տուն:

Մյուս որը յես հարցրի, թե վոր-
տեղ կարելի յե տեսնել փղերին աշ-
խատելիս:

Անտառի յեզրին, մի գետակի մոտ,
տաշած գերանների մի քանի ահագին
պահեստներ կային: Նույն տեղում կար
մի փիղ, վոր շատ ծեր եր յերևում:

րանները կնճիթով բռնած մոտենում
 էյին այդ ծառերին, նրանք ստիպված
 վայր էյին դնում գերանները, թեքում
 ու դնում էյին նրանց ճանապարհի
 յերկարությամբ, չորում առաջին փո-
 տերի վրա և իրենց քիթով՝ կնճիթի
 վերին մասով գերանը առաջ հրում:
 Գերանը հողը քանդելով և ճանապարհի
 քարերը տեղահան անելով առաջ եր
 շարժվում, փիղն ել նրա հետ սողալով
 առաջ եր շարժվում և գերանն առաջ
 մղում, մինչև գերանն ամբողջապես
 անցնում եր յերկու ծառերի մյուս
 կողմը: Ճերմում եր, փոր ծնկաչոր առաջ
 սողալը և գերանը քիթով առաջ հրելը
 փղերի համար չափազանց ծանր աշ-
 խատանք եր, փորը կատարելուց հետո
 նրանք կանգնում, փոքր ինչ հանգըս-
 տանում էյին, ապա նորից գերանը
 թեքում դարձնում էյին ճանապարհի
 լայնությամբ, նորից չորում էյին,
 կնճիթը դնում գետնի վրա և ծնկնե-



րով գլորում գերանը իրենց կնճիթի
 վրա: Զարմանալի բան եր, փոր նրանց
 կնճիթը չեր ճխտվում գերանների

ծանրութիւնից: Նրանք նորից վտարի
էյին կանգնում՝ ահագին գերանը
կնճիթով բռնում և ճոճվելով շարու-
նակում իրենց ճանապարհը դեպի պա-
հեստը: Մարդիկ չէյին ուզում կտրել
այդ յերկու ծառը, վոր գտնվում
էյին ճանապարհի վրա և այդքան նե-
ղութիւն էյին պատճառում այդ խեղճ
կենդանիներին:

Մեր մեղքը գալիս էր տեսներ,
թէ ինչպես է չարչարվում ծեր փիղը
գերանների կույտերը դարսելիս, ինչ-
պես և բեռնակիր փղերի տաժանելի
աշխատանքը գերանները յերկու ծա-
ռերի արանքով անցկացնելիս: Կարճ
ժամանակ մնացինք այդտեղ և շու-
տով հեռացանք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0386628

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

БОРИС ЖИТКОВ
ПРО СЛОНА



АРМЕНГИЗ—ЭРИВАНЬ

3352